



ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻԻ 22.

1857

ՆՈՅԵՄԲԵՐ 15.

Օսմանեան Օգոստոսիառ Ինքնակաշին հասնոքիսն Մուրատեան վարժարանին աշակերտներուն յառաջադիմութեանը վրայօր :

Բազմավէպիս () գոստոս ամսուն մէջը Մուրատեան Վարժարանին քննութեան ու պարգևաբաշխութեան հանդիսին վրայ տեղեկութիւն տալու աւտենը՝ ըսինք ալ որ () սմանեան Պրան Բարիզ եղած Բարձրապատիւ Ռեսպանը Մէհմէտ Ղէմիլ Պէյն ալներկայ ու նախագահ էր : Հիմայ այս ալ կ'աւելցնենք՝ որ նոյն իշխանը այն քննութեանէն Վարժարանին վրայ առած վարկումը () սմանեան Տէրութեանը հաղորդած ըլլալով, ու Վարժարանին յառաջադիմութիւնը ինչուան Ինքնակաշին Մեծափառութե ահանջը հասնելով, անոր ունեցած հաճութիւնը Վարժարանին վերատեսչին ծանուցեր է այս թղթովս :

Բարիզ 15 Հոկտ. 1857

Արգոյ վերատեսչ :

Ինձի ախորժելի բան մըն էր Ինքնակաշին Տէրութեանը ծանուցանել Մուրատեան վարժարանի յառաջադիմութիւնը, որ

յայտնի կ'երևնար դպրոցական տարւոյն լրմանը հանդիսէն. ու կը փութամ Հրամանքիդ աւետելու որ Սուլթանին Մեծափառութիւնը հաճութեամբ լսեր է այդ յառաջադիմութիւնը, արժանի իր հպատակացը վրայ ունեցած բարձր խնամոցը, և մանաւանդ այդ վարժարանիդ վրայ, որ Հրամանքիդ խելացի ու խոհեմ տեսչութեամբը այդչափ կը ծաղկի :

Ընդունէ, Արգոյ վերատեսչ, այս նոր ապացոյցը մեր Օգոստոսիառ Թագաւորին ունեցած խնամոցը, ու աշակերտներուդ ալ իմացուր. միանգամայն կը խնդրեմ որ ընդունիս Հրամանքիդ վրայ ունեցած մեծ համարմանս հաւաստիքը :

ՄԷՀԷՄԵԷՏ ԺԷՄԻԼ

Եւ յս թուղթս շատ խրախուսեց Վարժարանին աշակերտները՝ որ նոր սկսած ուսումնական տարինին աւելի ջանքով սորվին, ու Վարժարանին վերակացուացն ալ չկրնար ախորժելի չըլլալ ասանկ վկայութիւն մը իրենց աշխատանոցը պարապ չերթալուն :